«ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎՈՂ ՏԱՐՎԱ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2026

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....7
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ..... 9
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ..... 10
2025 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....11

"TVS & Partners Consulting Group" CJSC
Address: Yerevan, 0033, 27 Gyulbenkyan Street, 5/1 Area
Website: www.tvs.am
E-mail: info@tvs.am
Phone: +374 12 210 001, +374 43 210 040

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միակ մասնակցին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել *«ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության* (այսուհետ նաև՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որը ներառում է 2025 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ մեր եզրակացության *«Վերապահումով կարծիքի հիմք»* բաժնում նկարագրված հարցերի ազդեցության, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում *«ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության* 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝ Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ-ին) համապատասխան:

Վերապահումով կարծիքի հիմք

- Մենք նշանակվել ենք Ընկերության աուդիտ իրականացնող անձ 2025 թվականի դեկտեմբերի 31-ից հետո՝ 2026 թվականի ապրիլի 20-ին և այդ պատճառով հնարավորություն չենք ունեցել մասնակցել Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 175,422 հազար դրամ հաշվեկշռային արժեքով պաշարների տարեվերջյան գույքագրմանը և դիտել այդ գործընթացը: Մենք իրատեսական հնարավորություն չենք ունեցել կիրառել այլընտրանքային որևէ աուդիտորական ընթացակարգ՝ ողջամտորեն համոզվելու պաշարների՝ տարեվերջի ու տարեսկզբի դրությամբ ֆիզիկական առկայության վերաբերյալ՝ հատկապես նաև այն պարագայում, երբ Ընկերության նախորդ աուդիտորի կողմից ևս բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել ամենավաղ համադրելի ամսաթվի դրությամբ պաշարների առկայության վերաբերյալ, որն էլ հիմք է հանդիսացել վերջինի կողմից ձևափոխված (վերապահումով) կարծիք արտահայտելու համար: Նշված հանգամանքի ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում չի վերացել: Մենք անկարող էինք որոշել և գնահատել չգույքագրված պաշարների հնարավոր ազդեցությունն Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա:
- Ինչպես ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 2.5 Ծանոթագրությունում, Ընկերության ընթացիկ և նախորդ տարիների գործունեության ֆինանսական արդյունքների ցուցանիշները, զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքը հաշվետու և համադրելի ժամանակաշրջանների վերջի դրությամբ, ինչպես նաև ընթացիկ տարվա գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոց-

ների հոսքերի մեծությունը կազմում են բացասական մեծություն: Բացի այդ, հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվն ընկած ժամանակահատվածում Ընկերությունը չի իրականացրել այնպիսի մեծածավալ և միաժամանակ բավարար եկամտաբեր գործունեություն, չունի կնքված այնպիսի խոշոր գործարքներ կամ մշակված գործարար ծրագրեր, որոնք թույլ կտան, կամ ըստ էության հնարավորություն կստեղծեն Ընկերության ֆինանսական ցուցանիշների լավարկման, ինչպես նաև գործունեության էական ընդլայնման և շարունակական շահութաբերության ապահովման համար:

Այս իրավիճակը ցույց է տալիս, որ առկա է էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Ֆինանսական հաշվետվություններում այս հարցը բավարար կերպով չի բացահայտվել:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որն այդ հաշվետվությունների վերաբերյալ 2025 թվականի հունիսի 18-ին թվագրված անկախ աուդիտորի եզրակացությունում արտահայտել է ձևափոխված (վերապահումով) կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՄ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, դադարեցնել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ընթացքում միշտ կհայտնաբերվի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումներ կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Մենք նաև.

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, այդ ռիսկերին արձագանքելու նպատակով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված այնպիսի դեպքերի կամ հանգամանքների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզնից պահանջվում է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են պատճառ հանդիսանալ, որ Ընկերությունը դադարեցնի անընդատության հիմունքի կիրառումը, և այդպիսով այլևս չհամարվի անընդհատ գործող:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու դեպքերն այնպես, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում գտնվող անձանց աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացած աուդիտի իրականացման պատասխանատու ղեկավարն է՝

Տարոն Վարազդատյան

Գլխավոր տնօրեն

«Թիվիէս Ընդ Փարթներս Խորհրդատվական Խումբ» ՓՅԸՀ

ՀՀ, ք. Երևան, 0033, Գյուլբենկյան փ., 27շ., 5/1 տարածք

31 օգոստոսի 2026թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Ծնթ.	31.12.2025թ.	31.12.2024թ. (Վերաներկայացված)	01.01.2024թ. (Վերաներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	5	16,180	19,253	19,111
Ոչ նյութական ակտիվներ		846	1,672	2,585
Ներդրումային արժեթղթեր	6	20,399	20,399	9,094
Հետաձգված հարկային ակտիվներ	7	32,605	24,101	5,617
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**70,030**	**65,425**	**36,407**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	8	175,422	219,837	172,007
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ	9	242,002	49,852	103,949
Դրամական միջոցներ	10	184,855	13,848	2,115
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**602,279**	**283,537**	**278,071**
Ընդամենը ակտիվներ		**672,309**	**348,962**	**314,478**
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական կապիտալ	11	10	10	10
Կուտակված շահույթ (վնաս)		(510,862)	(245,728)	(162,265)
Ընդամենը սեփական կապիտալ		**(510,852)**	**(245,718)**	**(162,255)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ստացված վարկեր և փոխառություններ	12	-	-	16,885
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	-	**16,885**
Ընթացիկ պարտավորություններ				
Ստացված վարկեր և փոխառություններ	12	730,912	177,422	178,381
Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ	13	366,608	284,370	248,511
Շահութահարկի գծով պարտավորություն		294	9,138	1,751
Պահուստներ	14	85,347	123,750	31,205
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**1,183,161**	**594,680**	**459,848**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**672,309**	**348,962**	**314,478**

Տնօրեն
Կարեն Վարդանյան

ՀՀ ՄԱՐԶԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԱՐԱՏ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ARARAT LIMITED LIABILITY COMPANY "MANANA GRAIN" LIMITED LIABILITY COMPANY

Գլխավոր հաշվապահ՝
«ԿՈՆՍՏԱՆՏ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ
Նարեկ Թադևոսյան

31 մարտի 2026թ.

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթ.	2025թ.	2024թ. (Վերաներկայացված)
Հասույթ	15	2,505,608	1,145,576
Ինքնարժեք	16	(2,441,590)	(853,613)
Համախառն շահույթ		**64,018**	**291,963**
Իրացման ծախսեր	17	(279,893)	(256,840)
Վարչական ծախսեր	18	(49,802)	(34,751)
Այլ ծախսեր	19	(25,787)	(96,997)
Այլ եկամուտներ	20	54,757	8,664
Ֆինանսական ծախսեր	21	(33,506)	(12,066)
Հիմնական միջոցների օտարումից զուտ կորուստ		(957)	-
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)		(2,174)	6,342
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**(273,344)**	**(93,685)**
Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)	22	8,210	10,222
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**(265,134)**	**(83,463)**

Տնօրեն

Կարեն Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝
«ԿՈՆՍՏԱՆՏ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ
Նարեկ Թադևոսյան

31 օգոստոսի 2026թ.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2024թ. (Վերաներկայացված)	10	(162,265)	(162,255)
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(83,463)	(83,463)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ. (Վերաներկայացված)	10	(245,728)	(245,718)

Հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ (վնաս)	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդն առ 01 հունվարի 2025թ. (Վերաներկայացված)	10	(245,728)	(245,718)
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(265,134)	(265,134)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.	10	(510,862)	(510,852)

Տնօրեն

Կարեն Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝
«ԿՈՆՍՏԱՆՏ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ
Նարեկ Թադևոսյան

31 օգոստոսի 2026թ.

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2025թ.	2024թ. (Վերանայված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Գնորդներից ստացված մուտքեր	2,809,524	1,389,621
Այլ մուտքեր	926	422
Վճարումներ մատակարարներին և նրանց անունից	(2,696,158)	(909,159)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(129,855)	(92,443)
Վճարումներ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց և նրանց անունից	(94,293)	(109,256)
Վճարված միջնորդավճարներ ֆինանսական կազմակերպություններին՝ ապառիկ վաճառքի ձևակերպման նպատակով	(78,449)	(53,763)
Վճարումներ երաշխիքի ստացման միջնորդավճարների գծով	(6,111)	(5,498)
Վճարված հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(122,346)	(162,458)
Վճարված շահութահարկ	(9,138)	(875)
Այլ վճարումներ	(20,372)	(4,184)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(346,272)**	**52,407**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերման գծով ելքեր	-	(11,304)
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով ելքեր	(5,883)	(4,623)
Ներդրումային արժեթղթերի գծով ստացված շահաբաժիններ	215	88
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(5,668)	(15,839)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերի և փոխառությունների ստացումից մուտքեր	3,046,928	46,689
Վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	(2,491,795)	(63,725)
Վճարված տոկոսներ	(29,171)	(7,656)
Օվերդրաֆտների և վարկային գծերի տրամադրման միջնորդավճարներ	(3,021)	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**522,941**	**(24,692)**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**171,001**	**11,876**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	6	(143)
Դրամական միջոցների մնացորդն ատ 01 հունվարի	**13,848**	**2,115**
Դրամական միջոցների մնացորդն ատ 31 դեկտեմբերի	**184,855**	**13,848**

Տնօրեն

Կարեն Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝
«ԿՈՆՍՏԱՆՏ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ
Նարեկ Թադևոսյան

31 օգոստոսի 2026թ.

2025 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

ա) Ընկերության մասին

«ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով ու իրավական այլ ակտերով և իր կանոնադրությամբ: Ընկերությունը գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2017 թվականի նոյեմբերի 17-ին:

Ընկերության

Կրճատ անվանումը՝	«ՄԱՆԱՆԱ ԳՐԵՅՆ» ՍՊԸ
Պետական գրանցման համարը՝	51.110.993489
Պետական գրանցման ամսաթիվը՝	17.11.2017թ.
Գրնվելու վայրը և իրավաբանական հասցեն՝	ՀՀ, Արարատի մարզ, Արարատ համայնք, Արմաշ, 0624, Մ. Նիկողոսյան փ., տ. 18
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	04230561

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2024 թվականի ապրիլի 26-ի № 122-Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրվել է էլեկտրական էներգիայի մատակարարման ԼԷ № 0777 լիցենզիան՝ մինչև 2039 թվականի ապրիլի 27-ը գործողության ժամկետով, որով Ընկերությանը տրվել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 516-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով սահմանված դեպքերում և կարգով էլեկտրական էներգիա (հզորություն) մեծածախ շուկայում գնելու և (կամ) ներկրելու իրավունք և սահմանվել է պարտավորություն լիցեզիայի պայմաններին ու կնքված պայմանագրերին համապատասխան՝ էլեկտրական էներգիան չկարգավորվող գներով վաճառելու իր հետ մատակարարման պայմանագիր կնքած սպառողներին, իսկ ավելցուկը՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներին: Թեև Ընկերությունը լիցենզիան ստացել է 2024 թվականի ընթացքում, այդուհանդերձ ակտիվ գործունեությունը սկսել է իրականացնել միայն 2025 թվականի սկզբից:

Ընկերության գործունեության հիմնական ուղղությունները հանդիսանում են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարումը և արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների կատարումը:

Ընկերության աշխատակիցների թվաքանակն առ 31.12.2025թ. կազմել է 11 հոգի (31.12.2024թ.՝ 12 հոգի):

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 1 (մեկ) բաժնեմասի, որը տեղաբաշխված է, լրիվ վճարված և պատկանում է Ընկերության միակ մասնակից՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մուշեղ Գուրգենի Նիկողոսյանին:

Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը և Ընկերության գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնականն լուծման իրավունք: Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության տնօրենը:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1 Հայտարարություն համապատասխանության մասին

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի հրապարակած և «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում գործողության մեջ դրված Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտին (ՓՄԿ ՖՀՄՍ) համապատասխան:

2.2 Չափման հիմունքը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքի հիմունքով:

2.3 Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Ստորագրումը

Ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 2026 թվականի օգոստոսի 31-ին Ընկերության տնօրեն Կարեն Վարդանյանի և Ընկերությանը հաշվապահական հաշվառման ծառայություններ մատուցող «ԿՈՆՍՏԱՆՏ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի անունից գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող՝ լիազոր ներկայացուցիչ Նարեկ Թադևոսյանի կողմից:

2.5 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են՝ ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում, և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում Ընկերության գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն կամ դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք չկա:

Թեև Ընկերության ընթացիկ և նախորդ տարիների գործունեության ֆինանսական արդյունքների ցուցանիշները, զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքը հաշվետու և համադրելի ժամանակաշրջանների վերջի դրությամբ, ինչպես նաև ընթացիկ տարվա գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցների հոսքերի մեծությունը կազմում են բացասական մեծություն, այդուհանդերձ, Ընկերության գործունեության նման ցուցանիշների առկայության պայմաններում նույնիսկ, Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ նշված հանգամանքը չի կարող լուրջ սպառնալիք հանդիսանալ Ընկերության գործունեության շարունակականության ապահովման համար, իսկ դրամական միջոցների սակավությունը միշտ հնարավոր կլինի լրացնել՝ Ընկերության միակ մասնակցից և այլ կապակցված կողմերից փոխառություններ ներգրավելու միջոցով:

2.6. <u>Նախորդ ժամանակաշրջանների սխալներ և վերադասակարգումներ</u>

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերությունը հայտնաբերել է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող սխալներ և վերադասակարգման դեպքեր: Սխալները և վերադասակարգման դեպքերն ազդեցություն են թողել նախորդ տարվա վերջի և սկզբի (ամենավաղ համադրելի ամսաթվի) դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունների և նախորդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա: Դրանով պայմանավորված, Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացվել են: Համեմատական ֆինանսական տեղեկատվությունը ևս վերաներկայացվել է:

Նախորդ ժամանակաշրջանների հիմնական (էական համարվող) սխալների և վերադասակարգման դեպքերի նկարագրությունը և ուղղման ազդեցությունը ներկայացված է ստորև.

1. Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվները նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ներկայացրել է ընթացիկ ակտիվների կազմում: Ֆինանսական հաշվետվություններում դրանք վերադասակարգվել են և ներկայացվել ոչ ընթացիկ ակտիվների կազմում, քանի որ դրանց մարումը (օգտագործումը) չի ենթադրվում համադրելի ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում: Այդ վերադասակարգումը կատարվել է նաև ամենավաղ համադրելի ամսաթվի դրությամբ:

2. Ընկերությունը համադրելի ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում մարման ենթակա վարկերն ու փոխառությունները նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ներկայացրել է ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում: Ֆինանսական հաշվետվություններում դրանք վերադասակարգվել են և ներկայացվել ընթացիկ պարտավորությունների կազմում: Այդ վերադասակարգումը կատարվել է նաև ամենավաղ համադրելի ամսաթվի դրությամբ:

3. Ընկերությունը նախորդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների երաշխիքային սպասարկման գծով պահուստավորում չի կատարել և ըստ այդմ՝ պահուստ չի ճանաչել: Պահուստի չճանաչման, և դրանից բխող՝ հետաձգված հարկային ակտիվների չճանաչման հանգամանքներն ազդեցություն են թողել նաև ամենավաղ համադրելի ամսաթվի դրությամբ Ընկերության կուտակված շահույթի (վնասի), ինչպես նաև նախորդ տարվա շահույթի (վնասի) ցուցանիշների վրա: Ֆինանսական հաշվետվություններում այդ սխալներն ուղղվել են:

4. Ընկերությունը դատական գործի բացասական ելքի դեպքում՝ պատճառված նյութական վնասի հատուցման գծով և աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստները նախորդ հաշվետու ժամանակաշրջանում ներկայացրել է ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում: Ֆինանսական հաշվետվություններում դրանք վերադասակարգվել են և ներկայացվել ընթացիկ պարտավորությունների կազմում, քանի որ դատական գործի ելքը կարող էր տեղի ունենալ անմիջապես հենց նախորդ ժամանակաշրջանում, այսինքն չկար անվերապահ համոզվածություն կամ այնպիսի նորմատվիային կարգավորում առ այն, որ նշված գործով դատական ակտը պետք է կայացվեր համադրելի ամսաթվից հետո 12-ամսյա ժամանակահատվածից ավելի ուշ, իսկ աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստին առնչվող դրամական արտահոսքերը սովորաբար տեղի են ունենում պահուստավորմանը հաջորդող տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս:

5. Ընկերությունը ֆինանսական կազմակերպություններին տրված ապառիկ վաճառքի ձևակերպման միջնորդավճարները նախորդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացրել է առանձին տողային հոդվածով՝ որպես միջնորդավճաների գծով

ծախսեր: Քանզի այդ միջնորդավճարները գանձվում են վաճառքի կազմակերպման նպատակով, հետևապես ծախսերի՝ ըստ գործառույթի դասակարգման դեպքում, դրանք պետք է ներառվեն իրացման ծախսերի կազմում: Ֆինանսական հաշվետվություններում այդ ծախսերը վերադասակարգվել են և ներկայացվել իրացման ծախսերի կազմում:

6. Ընկերությունը երաշխիքային սպասարկման ծախսերը նախորդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացրել է այլ ծախսերի կազմում: Ֆինանսական հաշվետվություններում դրանք վերադասակարգվել են և ներկայացվել ինքնարժեքի կազմում, քանի որ դրանք անմիջական մասնակցություն են ունենում կատարված աշխատանքների ամբողջական ինքնարժեքը հաշվարկելու և ճշգրիտ արտացոլելու նպատակով:

7. Ընկերությունը դատական գործի բացասական ելքի դեպքում՝ պատճառված նյութական վնասի հատուցման գծով պահուստի ճանաչման ծախսը նախորդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացրել է վարչական ծախսերի կազմում: Ֆինանսական հաշվետվություններում այդ ծախսը վերադասակարգվել է և ներկայացվել այլ ծախսերի կազմում, քանի որ այն ըստ էության չունի վարչական (կազմակերպչական) գործառույթ:

8. Ընկերության աշխատակիցների գործառույթներով պայմանավորված՝ նրանց աշխատավարձի գծով ծախսը նախորդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ոչ ամբողջապես է ճշգրիտ արտացոլվել համապատասխան ծախսային հոդվածներում: Ըստ այդմ, Ֆինանսական հաշվետվություններում կատարվել են համապատասխան վերադասակարգումներ՝ ինքնարժեքի, իրացման և վարչական ծախսերի միջև:

Ընկերությունը համադրելի ֆինանսական տեղեկատվությունն առավել ճշգրիտ ներկայացնելու նպատակով, նախորդ տարվա վերջի և սկզբի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում և նախորդ տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճշգրտել է նաև որոշ այլ ֆինանսական ցուցանիշներ, որոնք իրենց մեծությամբ եղել են ոչ էական, ուստի դրանց շտկման համար հիմք հանդիսացած սխալների և վերադասակարգման դեպքերի նկարագրությունը վերևում չի շարադրվել, սակայն դրանց ուղղման ազդեցությունը ներկայացված է ստորև՝ էական ուղղումների հետ մեկտեղ.

2025 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղման և վերադասակարգումների ազդեցության պարզաբերումը 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերջի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա, բերված է ստորև.

Հազար դրամ

	31.12.2024թ. (Վերանայված)	Սխալի ազդեցությունը	Վերադասակարգման ազդեցությունը	31.12.2024թ. (Նախկինում ներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	19,253	1,510	-	17,743
Ոչ նյութական ակտիվներ	1,672	-	-	1,672
Ներդրումային արժեթղթեր	20,399	-	-	20,399
Հետաձգված հարկային ակտիվներ	24,101	6,236	17,865	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**65,425**	**7,746**	**17,865**	**39,814**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	219,837	1,631	-	218,206
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ	49,852	(975)	-	50,827
Դրամական միջոցներ	13,848	-	-	13,848
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	(17,865)	17,865
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**283,537**	**656**	**(17,865)**	**300,746**
Ընդամենը ակտիվներ	**348,962**	**8,402**	**-**	**340,560**
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական կապիտալ	10	-	-	10
Կուտակված շահույթ (վնաս)	(245,728)	(25,209)	-	(220,519)
Ընդամենը սեփական կապիտալ	**(245,718)**	**(25,209)**	**-**	**(220,509)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ստացված վարկեր և փոխառություններ	-	-	(129,034)	129,034
Ոչ ընթացիկ պահուստներ	-	-	(83,879)	83,879
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	-	-	**(212,913)**	**212,913**
Ընթացիկ պարտավորություններ				
Ստացված վարկեր և փոխառություններ	177,422	-	129,034	48,388
Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ	284,370	(1,032)	(5,228)	290,630
Շահութահարկի գծով պարտավորություն	9,138	-	-	9,138
Պահուստներ	123,750	34,643	89,107	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**594,680**	**33,611**	**212,913**	**348,156**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**348,962**	**8,402**	**-**	**340,560**

2025 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղման և վերադասակարգումների ազդեցության պարկերումը 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա, բերված է ստորև.

Հազար դրամ

	2024թ. (Վերանայված)	Սխալի ազդեցությունը	Վերադասակարգման ազդեցությունը	2024թ. (Նախկինում ներկայացված)
Հասույթ	1,145,576	-	(4,652)	1,150,228
Ինքնարժեք	(853,613)	(33,682)	(23,872)	(796,059)
Համախառն շահույթ	**291,963**	**(33,682)**	**(28,524)**	**354,169**
Իրացման ծախսեր	(256,840)	-	(71,653)	(185,187)
Վարչական ծախսեր	(34,751)	724	132,392	(167,867)
Այլ ծախսեր	(96,997)	26,480	(83,559)	(39,918)
Միջնորդավճարների գծով ծախսեր	-	-	48,699	(48,699)
Այլ եկամուտներ	8,664	(724)	4,652	4,736
Ֆինանսական ծախսեր	(12,066)	(4,091)	(319)	(7,656)
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)	6,342	-	-	6,342
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը	**(93,685)**	**(11,293)**	**1,688**	**(84,080)**
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	10,222	1,297	-	8,925
Շահույթ (վնաս) և ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար	**(83,463)**	**(9,996)**	**1,688**	**(75,155)**

2025 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղման և վերադասակարգումների ազդեցության պարզաբերումը 2024 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա սկզբի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության վրա, բերված է ստորև.

Հազար դրամ	01.01.2024թ. (Վերաներկայացված)	Սխալի ազդեցությունը	Վերադասակարգման ազդեցությունը	01.01.2024թ. (Նախկինում ներկայացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	19,111	1,510	-	17,601
Ոչ նյութական ակտիվներ	2,585	-	-	2,585
Ներդրումային արժեթղթեր	9,094	-	-	9,094
Հետաձգված հարկային ակտիվներ	5,617	4,939	678	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**36,407**	**6,449**	**678**	**29,280**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	172,007	-	-	172,007
Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ	103,949	-	-	103,949
Դրամական միջոցներ	2,115	-	-	2,115
Հետաձգված հարկային ակտիվներ	-	-	(678)	678
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**278,071**	**-**	**(678)**	**278,749**
Ընդամենը ակտիվներ	**314,478**	**6,449**	**-**	**308,029**
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական կապիտալ	10	-	-	10
Կուտակված շահույթ (վնաս)	(162,265)	(16,901)	-	(145,364)
Ընդամենը սեփական կապիտալ	**(162,255)**	**(16,901)**	**-**	**(145,354)**
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ստացված վարկեր և փոխառություններ	16,885	-	(114,091)	130,976
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**16,885**	**-**	**(114,091)**	**130,976**
Ընթացիկ պարտավորություններ				
Ստացված վարկեր և փոխառություններ	178,381	(4,091)	114,091	68,381
Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ	248,511	-	(3,764)	252,275
Շահութահարկի գծով պարտավորություն	1,751	-	-	1,751
Պահուստներ	31,205	27,441	3,764	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**459,848**	**23,350**	**114,091**	**322,407**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**314,478**	**6,449**	**-**	**308,029**

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն, և

բ) միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը սկզբնական ճանաչման պահին պետք է չափվի իր սկզբնական արժեքով:

Հիմնական միջոցի միավորը՝ որպես ակտիվ ճանաչելուց հետո, հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացած օգուտը կամ կորուստը որոշվում է որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում են հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման-վերանորոգման ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

• Վարձակալված տարածքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	20 տարի
• Տրանսպորտային միջոցներ	8 տարի
• Արտադրատնտեսական գույք, գործիքներ	1-8 տարի
• Համակարգչային տեխնիկա	1-8 տարի
• Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

3.2. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Երբ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը ճանաչում է գործարքից հասույթը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա (ավարտվածության տոկոսի որոշման մեթոդի համաձայն): Գործարքի արդյունքը կարող է արժանահավատորեն գնահատվել, եթե բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Ավարտվածության աստիճանը որոշվում է յուրաքանչյուր կոնկրետ պայմանագրի գծով կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

Երբ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, Ընկերությունը ճանաչում է հասույթը միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք կփոխհատուցվեն:

Ապրանքների վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման նպատակով իրացված էլեկտրական էներգիան հաշվառվում է որպես ապրանքների վաճառքից հասույթ:

3.3. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի և հետաձգված հարկի հանրագումարը:

(i) Ընթացիկ հարկ

Ընթացիկ հարկը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով հարկվող շահույթի հիման վրա:

Ընկերությունն ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթից վճարվելիք հարկի գծով ճանաչում է ընթացիկ հարկային պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների

համար վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարվելիք գումարը, Ընկերությունն այդ գերազանցող մասը ճանաչում է որպես ընթացիկ հարկային ակտիվ:

Ընկերությունն ընթացիկ հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է այն գումարով, որն ակնկալում է, որ կվճարի (կփոխհատուցի)՝ կիրառելով հարկի դրույքները և հարկային օրենսդրությունը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

(ii) Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը որոշվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև տարբերությունների հիման վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գուդվիլի սկզբնական ճանաչումից, կամ

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը՝

բ (i) ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և

բ (ii) գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով այն չափով, որքանով հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը՝

ա) ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ, և

բ) այդ գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Ընկերությունը հետաձգված հարկային պարտավորությունը (ակտիվը) չափում է՝ կիրառելով հարկի դրույքները և հարկային օրենսդրությունը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել մինչև հաշվետու ամսաթիվը:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցվող չօգտագործված հարկային վնասների գծով հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է այն չափով, որով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները: Այն չափով, որով հավանական չէ, որ Ընկերությունը կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները, հետաձգված հարկային ակտիվները չեն ճանաչվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերությունը վերագնահատում է չճանաչված հետաձգված հարկային ակտիվները: Ընկերությունը ճանաչում է նախկինում չճանաչված հետաձգված հարկային ակտիվներն այն չափով, որով հավանական է դարձել ապագա հարկվող շահույթների հաշվին հետաձգված հարկային ակտիվների փոխհատուցումը:

3.4 Դրամական միջոցներ

Դրամական միջոցները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային

հաշիվները և ցպահանջ կամ սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.5. Արտարժութային գործարքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունների գծով օգուտը (կորուստը) ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արտարժույթի նկատմամբ հայկական դրամի՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
Դրամով	2025թ.	2024թ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
1 ԱՄՆ դոլար	392.73	387.01	381.36	396.56
1 Եվրո	436.98	424.86	449.01	413.89

3.6. Պաշարներ

Ընկերությունը պաշարների կազմում է ճանաչում այն ակտիվները, որոնք՝

ա) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար.

բ) արտադրության ընթացքում են նման վաճառքի համար. կամ

գ) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման նպատակով գնված և իրացված էլեկտրական էներգիան հաշվառվում է որպես պաշար:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.7. Ֆինանսական գործիքներ

(i) <u>Առևտրական դեբիտորական պարտքեր</u>

Առևտրական դեբիտորական պարտքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ ստանալու իրավաբանորեն ամրագրված իրավունք:

Ընկերության կողմից կատարվող աշխատանքները և մատուցվող ծառայությունները կատարվում են վճարման սովորական պայմանների հիմունքով, իսկ էլեկտրական էներգիայի մատակարարման գործարքները՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով՝ առանց նշանակալի ժամանակահատվածով պարտքի տարաժամկետման հնարավորության: Դեբիտորական պարտքերը տոկոսակիր չեն:

Եթե գոյություն ունի անկողմնակալ վկայություն, որ առևտրական դեբիտորական պարտքերի գծով առկա է արժեզրկումից կորուստ, ապա կորուստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(ii) <u>Առևտրական կրեդիտորական պարտքեր</u>

Առևտրական կրեդիտորական պարտքերը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործարքի պայմանագրային կողմ և որպես հետևանք, ունենում է դրամական միջոցներ վճարելու իրավաբանորեն ամրագրված պարտավորություն:

Առևտրական կրեդիտորական պարտքերը վճարման սովորական պայմանների հիմունքով պարտականություններ են՝ առանց նշանակալի ժամանակահատվածով պարտավորության տարաժամկետ մարման հնարավորության և տոկոսակիր չեն:

(iii) <u>Ներդրումային արժեթղթեր (բաժնետոմսեր)</u>

Ներդրումային արժեթղթերը սկզբնապես չափվում են գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները): Սկզբնական չափումից հետո, ներդրումային արժեթղթերը չափվում են հետևյալ կերպ.

i. եթե բաժնետոմսերը հրապարակայնորեն շրջանառվում են կամ դրանց իրական արժեքը կարող է այլ կերպ արժանահավատորեն չափվել առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի, ներդրումը պետք է չափվի իրական արժեքով՝ իրական արժեքում փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում.

ii. բոլոր այլ համանման ներդրումները պետք է չափվեն ինքնարժեքով՝ հանած արժեզրկումը:

Ընկերության ներդրումային արժեթղթերն իրենցից ներկայացնում են հայաստանյան առևտրային բանկերից մեկի սովորական (անվանական) բաժնետոմսեր:

(iv) <u>Ավանդներ և փոխառություններ</u>

Ավանդները և փոխառությունները սկզբնապես չափվում են գործարքի գնով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները): Սկզբնական չափումից հետո, ավանդները և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստորև նշվածների զուտ գումարն է՝

ա) գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին,

բ) հանած հիմնական գումարի ցանկացած մարումներ,

գ) գումարած կամ հանած սկզբնական ճանաչման գումարի և մարման գումարի միջև ցանկացած տարբերության կուտակված ամորտիզացիան՝ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով,

դ) հանած ֆինանսական ակտիվի արժեզրկման կամ անհավաքագրելիության գծով ցանկացած նվազեցում:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, երբ տեղին է, ավելի կարճ ժամանակաշրջանի համար, գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները ճշգրտորեն զեղչում է մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը որոշվում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության սկզբնական ճանաչման պահի դրությամբ հաշվեկշռային արժեքի հիման վրա:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի համաձայն՝

ա) ֆինանսական ակտիվի (պարտավորության) ամորտիզացված արժեքն ապագա դրամական մուտքերի (վճարումների) ներկա արժեքն է՝ զեղչված արդյունավետ տոկոսադրույքով.

բ) ժամանակաշրջանի տոկոսային ծախսը (եկամուտը) հավասար է ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆինանսական պարտավորության (ակտիվի) հաշվեկշռային արժեքի և ժամանակաշրջանի արդյունավետ տոկոսադրույքի արտադրյալին:

Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս Ընկերությունը գնահատում է դրամական միջոցների հոսքերը՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ վաղաժամկետ վճարման, գնման կամ համանման օպցիոններ) և այն հայտնի պարտքային կորուստները, որոնք Ընկերությունը կրել է, սակայն այն չպետք է հաշվի առնի դեռևս չկրած ապագա պարտքային հնարավոր կորուստները:

3.8. Պահուստներ

Ընկերությունը պահուստը ճանաչում է միայն այն դեպքում, երբ՝

ա) հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.

բ) հավանական է, որ պարտականությունը մարելու համար Ընկերությունից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.

գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Ընկերությունը պահուստը չափում է հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որն Ընկերությունը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար:

Ընկերությունը պահուստը ճանաչում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն և պահուստի գումարը որպես ծախս, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժին պահանջում է ծախսումը ճանաչել որպես որևէ ակտիվի ինքնարժեքի մաս:

Ընկերությունը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ վերանայում և ճշգրտում է պահուստները՝ այդ հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու նպատակով: Նախկինում ճանաչված գումարների ցանկացած ճշգրտում ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ եթե պահուստը սկզբնապես ճանաչվել էր որպես ակտիվի արժեքի մաս:

3.9. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների բոլոր այն հատուցումների գծով ծախսերը, որոնց նկատմամբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությանը ծառայություններ մատուցելու արդյունքում ձեռք են բերել իրավունք, ճանաչվում են՝

ա) որպես պարտավորություն, աշխատակցին ուղղակիորեն վճարված գումարները հանելուց հետո: Եթե վճարված գումարը գերազանցում է մինչև հաշվետու ամսաթիվը մատուցած ծառայությունից առաջացած պարտականության գումարը, Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի.

բ) որպես ծախս, բացառությամբ երբ ՓՄԿ ՖՀՄՍ-ի մեկ այլ բաժնով պահանջվում է, որ ծախսումը ճանաչվի որպես ակտիվի արժեքի մաս:

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են՝

i. աշխատավարձը,

ii. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին են վճարովի տարեկան հասանելիք արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության ու մայրության նպաստը,

iii. պարգևավճարները, լրավճարները և այլ հավելումները,

iv. առողջության (բժշկական) ապահովագրությունը:

Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ակնկալվող ծախսերը ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է նրանց հետագա փոխհատուցելի բացակայությունների իրավունքը: Ընկերությունը կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսերը չափում է չզեղչված լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքի արդյունքում: Ընկերությունն այդ գումարը հաշվետու ամսաթվի դրությամբ ներկայացնում է որպես ընթացիկ պարտավորություն:

4. Գնահատումներ և դատողություններ

ՓՄԿ ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

Հաշվապահական գնահատումների փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց՝ համապատասխանաբար ճանաչվելով այն հաշվետու ժամանակաշրջանում, որում կատարվել են փոփոխությունները, իսկ փոփոխությունները հաջորդ հաշվետու ժամանակաշրջանների վրա ազդելու դեպքում, ճանաչվում են նաև այդ ժամանակաշրջաններում:

4.1. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոններ, ինչպիսին

են տնտեսական, ֆիզիկական կամ տեխնոլոգիական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ու սպասարկման պլաններից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2. Ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստն ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

4.3. Երաշխիքային սպասարկման պահուստ

Ընկերության կողմից արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների գծով պայմանագրերով գնորդներին տրամադրված երաշխիքային սպասարկման ժամկետում անհատույց փոխարինման ենթակա դետալների, պահեստամասերի և օգտագործված այլ նյութերի գծով Ընկերությունը ձևավորում է երաշխիքային սպասարկման պահուստ՝ հիմնվելով ինչպես անցյալի փորձի, այնպես էլ Ընկերության կողմից օգտագործվող սարքավորումների ու տեխնոլոգիաների միջազգայնորեն ընդունված չափանիշների և կիրառելի ցուցանիշների վրա:

4.4. Կապակցված կողմերի հետ գործարքներ

Իր սովորական գործունեության ընթացքում Ընկերությունն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Ընկերությունը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Ընկերությունը պարբերաբար հետևում է Ընկերության միակ մասնակցի նշանակալի մասնակցությանն այլ կազմակերպությունների կապիտալում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուրի հետ գործարքի ծավալները:

5. Հիմնական միջոցներ (Վերաներկայացված)

Հազար դրամ	Վարձակալված տարածքի վրա կատարված կապիտալ ծախսումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Համակարգչային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Արժեք						
Մնացորդ առ 01.01.2024թ.	559	9,072	6,786	3,712	7,259	27,388
Ձեռքբերում	-	-	870	822	60	1,752
Դուրսգրում	-	-	-	-	-	-
Կապիտալացում	-	2,687	-	-	-	2,687
Մնացորդ առ 31.12.2024թ.	559	11,759	7,656	4,534	7,319	31,827
Մնացորդ առ 01.01.2025թ.	559	11,759	7,656	4,534	7,319	31,827
Ավելացում	-	-	702	465	369	1,536
Դուրսգրում	-	(6,050)	-	-	-	(6,050)
Կապիտալացում	702	3,380	-	-	-	4,082
Մնացորդ առ 31.12.2025թ.	1,261	9,089	8,358	4,999	7,688	31,395
Մաշվածություն						
Մնացորդ առ 01.01.2024թ.	22	1,187	2,592	3,143	1,330	8,274
Տարվա մաշվածություն	28	1,444	1,173	838	817	4,300
Դուրսգրում	-	-	-	-	-	-
Մնացորդ առ 31.12.2024թ.	50	2,631	3,765	3,981	2,147	12,574
Մնացորդ առ 01.01.2025թ.	50	2,631	3,765	3,981	2,147	12,574
Տարվա մաշվածություն	42	1,807	1,069	505	996	4,419
Դուրսգրում	-	(1,778)	-	-	-	(1,778)
Մնացորդ առ 31.12.2025թ.	92	2,660	4,834	4,486	3,143	15,215
Հաշվեկշռային արժեք						
Առ 31.12.2024թ.	509	9,128	3,891	553	5,172	19,253
Առ 31.12.2025թ.	1,169	6,429	3,524	513	4,545	16,180

31.12.2025թ. դրությամբ Ընկերության հիմնական միջոցների սեփականության իրավունքի սահմանափակումներ առկա չեն (31.12.2024թ. դրությամբ՝ նույնպես առկա չեն):

31.12.2025թ. դրությամբ Ընկերությունը չունի հիմնական միջոցների ձեռքբերման գծով որևէ էական պայմանագրային հանձնառություն (31.12.2024թ. դրությամբ՝ նույնպես չունի):

2025 թվականի ընթացքում (2024 թվականի ընթացքում՝ ևս) Ընկերությունը չի հայտնաբերել իր հիմնական միջոցների արժեզրկում:

6. Ներդրումային արժեթղթեր

Այս հոդվածում ներկայացված արժեթղթերը հաշվետու և համադրելի ամսաթվերի դրությամբ իրենցից ներկայացնում են հայաստանյան առևտրային բանկերից մեկի թվով 4,304 հատ սովորական (անվանական) բաժնետոմսերը (բաժնեչափը՝ 0.04%): Արժեթղթերից ստացված եկամուտը՝ շահաբաժինների ձևով, ճանաչվում է այլ եկամուտների կազմում (տե՛ս Ծնթ. 20):

Թեև այս բաժնետոմսերը ցուցակված են և հրապարակայնորեն շրջանառվում են կարգավորվող շուկայում, այդուհանդերձ դրանց գծով գործարքները բավարար չափով ակտիվ չեն (գործող շուկան ըստ էության բացակայում է), իսկ առկա գործարքների գները՝ իրենց բարձր տատանողականության պատճառով, շատ դեպքերում չեն ընորոշում բաժնետոմսերի իրական արժեքի որոշման ողջամտությունը, ինչը թույլ է տալիս գնահատել, որ այդ բաժնետոմսերի իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել՝ առանց անհարկի ծախսումների կամ ջանքերի: Դրանից ելնելով, Ընկերությունն այս ֆինանսական ակտիվները չափում է ինքնարժեքով (գործարքի գնով)՝ հանած արժեզրկումը:

7. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ (Վերաներկայացված)

(i) Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշվածների հետ.

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
Հազար դրամ	31.12.2025թ.	31.12.2024թ.	31.12.2025թ.	31.12.2024թ.	31.12.2025թ.	31.12.2024թ.
Պաշարներ	(1,592)	-	-	-	(1,592)	-
Առևտրական դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ	(2,737)	(1,826)	-	-	(2,737)	(1,826)
Ստացված փոխառություններ	(12,914)	-	-	-	(12,914)	-
Պահուստներ	(15,362)	(22,275)	-	-	(15,362)	(22,275)
Զուտ հարկային ակտիվ (պարտավորություն)	(32,605)	(24,101)	-	-	(32,605)	(24,101)

(ii) Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում տարվա ընթացքում

Հազար դրամ	01.01.2024թ.	2024թ. ճանաչված	31.12.2024թ.	01.01.2025թ.	2025թ. ճանաչված	31.12.2025թ.
Պաշարներ	-	-	-	-	(1,592)	(1,592)
Առևտրական դեբիտորական պարտքեր և տրված կանխավճարներ	-	(1,826)	(1,826)	(1,826)	(911)	(2,737)

Ստացված փոխառություններ	-	-	-	-	(12,914)	(12,914)
Պահուստներ	(5,617)	(16,658)	(22,275)	(22,275)	6,913	(15,362)
Ընդամենը	**(5,617)**	**(18,484)**	**(24,101)**	**(24,101)**	**(8,504)**	**(32,605)**

Հաշվետու ժամանակաշրջանում չճանաչված հետաձգված հարկային ակտիվների և պարտավորությունների մանրամասների և դրանց՝ շահութահարկի փաստացի (գործող) տոկոսադրույքի վրա ազդեցությանը ծանոթանալու համար տե՛ս Ծնթ. 22:

8. Պաշարներ (Վերաներկայացված)

Հազար դրամ	Ան 31.12.2025թ.	Ան 31.12.2024թ.
Արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների կատարման նպատակով օգտագործվող նյութեր, դետալներ, պահեստամասեր և սարքավորումներ	142,142	195,653
Արևային էներգիայի կայանների տեղադրման անավարտ աշխատանքներ	38,299	21,851
Վաճառքի խթանման նպատակով անհատույց տրամադրման ենթակա ապրանքներ	3,825	2,333
	184,266	**219,837**
Պաշարների արժեզրկման գծով պահուստ	(8,844)	-
Ընդամենը	**175,422**	**219,837**

31.12.2025թ. դրությամբ (31.12.2024թ. դրությամբ՝ նույնպես) որպես ներգրավված վարկերի ապահովման միջոց, գրավադրված են 150,000 հազար դրամ չնվազող մնացորդով Ընկերության պաշարները: Պաշարների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ առկա չեն:

Հաշվետու տարվա ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմում է 1,974,702 հազար դրամ (2024թ.՝ 667,955 հազար դրամ):

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունը հայտնաբերել է պաշարների արժեքի նվազում (2024թ. ընթացքում՝ չի հայտնաբերվել), որի գծով ճանաչել է արժեզրկման պահուստ՝ 8,844 հազար դրամի չափով: Արժեզրկման պահուստի գծով ծախսը ճանաչվել է այլ ծախսերի կազմում (տե՛ս Ծնթ. 19):

9. Առևտրական դեբիտորական պարտքեր և այլ ակտիվներ (Վերաներկայացված)

Հազար դրամ	Ան 31.12.2025թ.	Ան 31.12.2024թ.
Դեբիտորական պարտքեր մատակարարված էլեկտրական էներգիայի գծով	184,300	1,113
Դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	-	-
Ընդամենը առևտրական դեբիտորական պարտքեր էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեության գծով	*184,300*	*1,113*
Դեբիտորական պարտքեր արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների և այլ գործունեության գծով	49,082	43,179
Դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(6,031)	(5,791)
Ընդամենը առևտրական դեբիտորական պարտքեր արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների և այլ գործունեության գծով	*43,051*	*37,388*

Ընդհանուր առևտրական դեբիտորական պարտքեր	233,382	44,292
Ընդհանուր առևտրական դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստ	(6,031)	(5,791)
Ընդամենը առևտրական դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեք	***227,351***	***38,501***
Տրված կանխավճարներ	23,225	15,555
Տրված կանխավճարների արժեզրկման գծով պահուստ	(9,181)	(4,356)
Ընդամենը տրված կանխավճարների հաշվեկշռային արժեք	***14,044***	***11,199***
Կանխավճարներ աշխատավարձի գծով	607	40
Այլ ակտիվներ	-	112
Ընդամենը	**242,002**	**49,852**

Հաշվետու տարվա ընթացքում (2024թ.՝ նույնպես) Ընկերությունը դեբիտորական պարտքերի և տրված կանխավճարների գծով ձևավորել է արժեզրկման պահուստ, որի գծով ծախսը ճանաչվել է այլ ծախսերի կազմում (տե՛ս Ծնթ. 19), իսկ տրված կանխավճարների գծով ձևավորված պահուստի հակադարձումից եկամուտը ճանաչվել է այլ եկամուտների կազմում (տե՛ս Ծնթ. 20):

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեության գծով առաջացող դեբիտորական պարտքերի մարման տևողությունը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը, իսկ արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների և այլ գործունեության գծով առաջացող դեբիտորական պարտքերի մարման տևողությունը պայմանավորված է առանձին պայմանագրերով սահմանված վճարման ժամանակացույցերով, որոնք սովորաբար, միջինացված հաշվարկով, չեն գերազանցում 1 (մեկ) ամիսը:

10. Դրամական միջոցներ

Հազար դրամ	**Ան 31.12.2025թ.**	**Ան 31.12.2024թ.**
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	164,064	13,248
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	-	397
Դրամական միջոցներ ճանապարհին*	20,791	-
Դրամարկղ	-	203
Ընդամենը	**184,855**	**13,848**

* Դրամական միջոցները ճանապարհին իրենցից ներկայացնում են ՀՀ առևտրային բանկերում Ընկերությանը պատկանող հաշիվների միջև տեղափոխված գումարները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ դեռևս չեն մուտքագրվել (հաշվեգրվել) ընդունող բանկային հաշիվներին: Նշված գումարներն այդ բանկային հաշիվներին հասանելի են դարձել հաշվետու ամսաթվից անմիջապես հետո՝ առաջին աշխատանքային օրը:

31.12.2025թ. դրությամբ ՀՀ առևտրային բանկերից մեկում առկա է ՀՀ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից 83,879 հազար դրամի չափով կիրառված արգելանք՝ որպես Ընկերության դեմ ներկայացված հայցի ապահովման միջոց: Ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ նշված սահմանափակումը վերացել է՝ պայմանավորված Ընկերության կողմից գործն ըստ էության լուծող դատական ակտի ամբողջական կատարմամբ (տե՛ս Ծնթ. 14 և Ծնթ. 24.3):

2025 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

31.12.2025թ. դրությամբ (31.12.2024թ. դրությամբ՝ նույնպես) ՀՀ առևտրային բանկերից մեկում առկա 10,000 հազար դրամի չափով դրամական միջոցների գծով առկա է օգտագործման սահմանափակում՝ որպես ապառիկ կարգով ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված համագործակցության պայմանագրի շրջանակներում երաշխավորության ապահովման միջոց:

Դրամական միջոցների օգտագործման իրավունքի այլ սահմանափակումներ առկա չեն:

11. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով 1 (մեկ) բաժնեմասի, որը տեղաբաշխված է և լրիվ վճարված: Հաշվետու տարվա ընթացքում կանոնադրական կապիտալի փոփոխություն տեղի չի ունեցել:

12. Ստացված վարկեր և փոխառություններ (Վերաներկայացված)

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
Հազար դրամ	Առ 31.12.2025թ.	Առ 31.12.2024թ.	Առ 31.12.2025թ.	Առ 31.12.2024թ.
Չապահովված փոխառություններ				
Փոխառություններ	250,772	139,034	-	-
	250,772	139,034	-	-
Ապահովված վարկեր				
Բանկային վարկեր	480,140	38,388	-	-
	480,140	38,388	-	-
Ընդամենը	**730,912**	**177,422**	-	-

Բանկերից ներգրավված վարկերի ապահովման միջոց են հանդիսանում 150,000 հազար դրամ չնվազող մնացորդով Ընկերության պաշարները, կապակցված կողմերի կողմից տրված երաշխավորությունները և երրորդ անձանց պատկանող անշարժ գույքերի գրավը:

Ստորև ներկայացվում են դեռևս չմարված վարկերի և փոխառությունների պայմանագրերի էական պայմանները և մարման ժամանակացույցը.

Հազար դրամ	Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման տարին	Առ 31.12.2025թ.	Առ 31.12.2024թ.
Վարկեր					
Բանկային վարկեր	ՀՀ դրամ	14.00%	2026	450,534	-
Բանկային վարկեր	ՀՀ դրամ	13.00%	2026	29,606	-
Բանկային վարկեր	Եվրո	6.00%	2025	-	17,642
Բանկային վարկեր	Եվրո	8.00%	2025	-	13,658
Բանկային վարկեր	ԱՄՆ դոլար	7.00%	2025	-	7,088
Ընդամենը				**480,140**	**38,388**
Փոխառություններ					
Կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	Անտոկոս	Ցպահանջ	71,744	78,244
Կապակցված կողմերից	ԱՄՆ դոլար	Անտոկոս	2026	31,653	32,915
Կապակցված կողմերից	ՀՀ դրամ	Անտոկոս	2026	47,375	17,875
Երրորդ անձանցից	ՀՀ դրամ	Անտոկոս	2026	100,000	10,000
Ընդամենը				**250,772**	**139,034**

13. Առևտրական կրեդիտորական պարտքեր և այլ պարտավորություններ (Վերաներկայացված)

Հազար դրամ

	Ան 31.12.2025թ.	Ան 31.12.2024թ.
Կրեդիտորական պարտքեր ձեռք բերված էլեկտրական էներգիայի գծով	187,075	1,148
Կրեդիտորական պարտքեր էլեկտրական էներգիայի մատակարարման նպատակով ստացված ծառայությունների գծով	22,498	66
Կրեդիտորական պարտքեր սպառողներին սակագնի փոխհատուցման գծով	1,624	-
Ընդամենը կրեդիտորական պարտքեր էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեության գծով	*211,197*	*1,214*
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին՝ արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների կատարման գործունեության գծով	67,693	181,154
Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	150	-
Պարտավորություններ հարկերի և պարտադիր վճարների գծով՝ բացի շահութահարկից	16,895	24,530
Ստացված կանխավճարներ	70,673	77,472
Ընդամենը	**366,608**	**284,370**

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեության գծով կրեդիտորական պարտքերի վճարման ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը: Մնացած բոլոր կրեդիտորական պարտքերը ձևավորված են սովորական պայմաններում՝ առօրյա կատարվող գործարքներից:

Ստացված կանխավճարներն ամբողջությամբ իրենցից ներկայացնում են արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների գծով պայմանագրերով գնորդներից ստացված գումարները:

14. Պահուստներ (Վերաներկայացված)

Հազար դրամ

	Ան 31.12.2025թ.	Ան 31.12.2024թ.
Դատական գործի բացասական ելքի դեպքում՝ պատճառված նյութական վնասի հատուցման գծով	44,860	83,879
Արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների երաշխիքային սպասարկման գծով	35,942	34,643
Աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով	4,545	5,228
Ընդամենը	**85,347**	**123,750**

Դատական գործի բացասական ելքով պայմանավորված պահուստն իրենից ներկայացնում է Ընկերության գնորդներից մեկի կողմից Ընկերության դեմ ներկայացված հայցադիմումով պատճառված նյութական վնասի հատուցման գծով բավարարում տալու համար դրամական միջոցների հնարավոր արտահոսքի լավագույն գնահատականը: Հաշվետու ամսաթվի դրությամբ ձևավորված պահուստի մեծությունը վերանայվել է, որն արտացոլում է հաշվետու ժամկետաշրջանից հետո՝ մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվն ընկած դեպքերի ու իրադարձությունների ամբողջական պատկերումն ու արտացոլումը (տե՛ս նաև Ծնթ. 24.3): Դատական հայցի գծով ձևավորված պահուստի հակադարձումից եկամուտը ճանաչվել է այլ եկամուտների կազմում (տե՛ս Ծնթ. 20):

Արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների երաշխիքային սպասարկման գծով պահուստը պայմանագրերով գնորդներին տրամադրված երաշխիքի շրջանակներում Ընկերության կողմից կատարվելիք ծախսերի ներկա լավագույն գնահատականն է, որն Ընկերությունը կկրի ապագայում՝ հիմնված անցյալի փորձի, ինչպես նաև Ընկերության կողմից օգտագործվող սարքավորումների ու տեխնոլոգիաների միջազգայնորեն ընդունված չափանիշների և կիրառելի ցուցանիշների վրա: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով՝ ճշտելով կատարված աշխատանքների ինքնարժեքը: Ակնկալվում է, որ ձևավորված պահուստի հաշվին երաշխիքային սպասարկումը կկատարվի հաջորդ տարվա ընթացքում, ուստի դրա կարճաժամկետ բնույթը թույլ է տալիս դատողություն անել պահուստի գնահատված գումարը զեղչելու անհրաժեշտության բացակայության մասին:

Աշխատակիցների վաստակած և չօգտագործած արձակուրդային վճարների գծով պահուստի կազմում ներկայացված են աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները՝ տարեկան արձակուրդների տեսքով փոխհատուցելի բացակայությունների գծով: Պահուստավորումը կատարվում է յուրաքանչյուր տարեվերջի դրությամբ՝ տարեսկզբի մնացորդի համեմատությամբ աճի կամ նվազման գումարով՝ ճշտելով աշխատավարձի գծով ծախսերը յուրաքանչյուր աշխատակցի գործառույթին համապատասխանող ծախսային հոդվածում: Ակնկալվում է, որ դրամական արտահոսքերը տեղի կունենան հաջորդ տարվա ընթացքում՝ հերթական ամենամյա արձակուրդներն օգտագործելիս: Զեղչման ազդեցությունը համարվել է ոչ էական, և պահուստը չափվել է գնահատված դրամական արտահոսքերի անվանական գումարով:

15. Հասույթ (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեությունից	1,454,879	928
Արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների կատարումից	1,017,995	1,122,731
Ծառայությունների մատուցումից	25,603	13,396
Ապրանքների վաճառքից	7,131	8,521
Ընդամենը	**2,505,608**	**1,145,576**

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N 516-Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների համաձայն՝ էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեությունն իրականացվում է միայն համապատասխան բանկային երաշխիքի առկայության պայմաններում՝ երաշխիքային գումարով ծածկվող տիրույթում: Բանկային երաշխիքի ստացման գծով ծախսը ճանաչվում է ինքնարժեքի կազմում (տե՛ս Ծնթ. 16):

16. Ինքնարժեք (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեության ինքնարժեք	1,584,027	7,967
Կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների ինքնարժեք	851,371	839,856
Վաճառված ապրանքների ինքնարժեք	6,192	5,790
Ընդամենը	**2,441,590**	**853,613**

Ինքնարժեքի կազմում ներառված ծախսերի բաշխումն ըստ իրականացված գործունեության ուղղությունների և ծախսերի առաջացման բնույթի, ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեության ինքնարժեք		
Գնված էլեկտրաէներգիա	1,314,243	957
Հատուցումներ աշխատակիցներին	20,929	1,116
Հատուցումներ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց	-	341
Էլեկտրական էներգիայի պահուստի ապահովման ծառայություններ	107,775	-
Էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայություններ	97,621	46
Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայություններ	11,336	7
Էլեկտրաէներգետիկայի շուկայի օպերատորի ծառայություններ	3,390	2
Սպառողներին տրված սակագնի փոխհատուցում	22,622	-
Երաշխիքի ստացման միջնորդավճարներ	6,111	5,498
Ընդամենը էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի մատակարարման գործունեության ինքնարժեք	***1,584,027***	***7,967***
Արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների և այլ գործունեության ինքնարժեք		
Օգտագործված պաշարներ	609,302	632,073
Մոնտաժային աշխատանքներ	172,638	130,892
Երաշխիքային սպասարկման ծախսեր*	30,540	33,682
Սեյսմիկ փորձաքննության ծառայություններ	4,770	9,668
Հատուցումներ աշխատակիցներին	37,306	28,880
Հատուցումներ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց	-	6,520
Գործուղման ծախսեր	2,484	3,456
Մաշվածություն	523	475
Ընդամենը արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների և այլ գործունեության ինքնարժեք	***857,563***	***845,646***
Ընդամենը	**2,441,590**	**853,613**

* Երաշխիքային սպասարկման ծախսերն իրենցից ամբողջությամբ ներկայացնում են Ընկերության կողմից արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքների գծով պայմանագրերով գնորդներին

տրամադրված երաշխիքային սպասարկման ժամկետում փոխարինված դետալների, պահեստամասերի և օգտագործված այլ նյութերի ինքնարժեքը:

17. Իրացման ծախսեր (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	51,741	44,257
Հատուցումներ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց	88,337	105,195
Ապառիկ վաճառքի ձևակերպման միջնորդավճարներ ֆինանսական կազմակերպություններին	86,725	53,819
Վարձակալություն	15,017	16,433
Վաճառքի խթանման նպատակով անհատույց տրամադրված ակտիվներ	12,594	974
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	11,961	22,455
Վառելիք և տրանսպորտային ծախսեր	8,908	10,084
Մաշվածություն և ամորտիզացիա	3,849	3,226
Օգտագործված պաշարներ	761	-
Այլ	-	397
Ընդամենը	**279,893**	**256,840**

18. Վարչական ծախսեր (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	18,204	17,628
Հատուցումներ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ֆիզիկական անձանց	8,305	764
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	8,297	5,800
Ինտերնետային կայքի սպասարկում	5,130	-
Վարձակալություն	2,933	1,511
Գրասենյակային, կոմունալ և հեռահաղորդակցության ծախսեր	2,766	2,682
Հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ	1,829	2,041
Մաշվածություն և ամորտիզացիա	880	1,510
Բանկային ծախսեր	532	694
Այլ	926	2,121
Ընդամենը	**49,802**	**34,751**

19. Այլ ծախսեր (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Տույժեր և տուգանքներ	9,513	398
Պաշարների արժեքի՝ մինչև իրացման զուտ արժեք նվազեցումից ծախս	8,844	-
Դատական հայցի գծով պահուստի ձևավորման ծախս	-	83,879
Դեբիտորական պարտքերի արժեզրկման գծով պահուստի ձևավորման ծախս	240	5,791
Տրված կանխավճարների արժեզրկման գծով պահուստի ձևավորման ծախս	5,001	4,356
Արտարժույթի փոխարկումից ծախս	1,969	1,764

2025 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Այլ	220	809
Ընդամենը	**25,787**	**96,997**

20. Այլ եկամուտներ (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Դատական հայցի գծով ձևավորված պահուստի հակադարձումից եկամուտ	39,019	-
Առևտրական կրեդիտորական պարտքերի ներումից եկամուտ	10,671	3,465
Ստացված կանխավճարների հրաժարումից եկամուտ	-	4,651
Գնորդների հետ կնքված պայմանագրերի գծով առաջացած տույժերից եկամուտ	3,600	40
Բանկային հաշիվների մնացորդին հաշվեգրված տոկոսային եկամուտ	903	276
Ներդրումային արժեթղթերի գծով ստացված շահաբաժիններ	215	88
Տրված կանխավճարների գծով ձևավորված պահուստի հակադարձումից եկամուտ	176	-
Այլ	173	144
Ընդամենը	**54,757**	**8,664**

21. Ֆինանսական ծախսեր (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Բանկային վարկերի գծով հաշվեգրված տոկոսներ	30,485	7,975
Փոխառությունների գծով հաշվեգրված տոկոսներ	-	4,091
Օվերդրաֆտների և վարկային գծերի տրամադրման միջնորդավճարներ	3,021	-
Ընդամենը	**33,506**	**12,066**

22. Շահութահարկի գծով ծախս (եկամուտ) (Վերաներկայացված)

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	-	8,262
Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի գծով ծախսի ուղղում	294	-
Հետաձգված հարկի գծով ծախս (եկամուտ)՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետ (տե՛ս Ծանոթ. 7(ii))	(8,504)	(18,484)
	(8,210)	**(10,222)**

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 18% է (2024թ.՝ 18%):

Շահութահարկի փաստացի (գործող) դրույքի համապատասխանեցում.

Հազար դրամ	2025թ.	%	2024թ.	%
Շահույթ (վնաս) նախքան հարկումը	(273,344)		(93,685)	
Շահութահարկ՝ ընթացիկ դրույքաչափով	(49,202)	18.0	(16,863)	18.0
Նախորդ տարվա ընթացիկ շահութահարկի ուղղման ազդեցություն	294	(0.1)	-	-
Հարկային վնասից չճանաչված հետաձգված հարկային ակտիվների ազդեցությունը	29,288	(10.7)	-	-
Զուտ չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)	11,410	(4.2)	6,641	(7.1)
	(8,210)	**3.0**	**(10,222)**	**10.9**

Հաշվետու տարվա ընթացքում առաջացած 162,709 հազար դրամ հարկային վնասից ժամանակավոր տարբերությունների գծով առաջացող հետաձգված հարկային ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն ճանաչվել, քանի որ Ընկերությունը հավանական չի համարում բավարար հարկվող շահույթի ստացում՝ հետաձգված հարկային ակտիվներից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնելու նպատակով:

23. Կապակցված կողմերի հետ գործարքներ

23.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերությունը մայր կազմակերպություն չունի: Ընկերության թվով 1 (մեկ) բաժնեմասը պատկանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացի Մուշեղ Գուրգենի Նիկողոսյանին (տե՛ս Ծնթ. 1), որը հանդիսանում է Ընկերության վերջնական վերահսկող կողմը:

23.2. Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումներ

Ընկերության առանցքային ղեկավար անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	2025թ.	2024թ.
Հատուցումներ աշխատակիցներին	13,674	13,792

23.3. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Մնացորդն առ 31.12.2025թ.	2025թ.		Մնացորդն առ 01.01.2025թ.
Ստացված փոխառություններ	150,772	(19,147)	40,885	129,034
Ապրանքների իրացում, աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում	7,393	(132,872)	139,665	600
Ապրանքների ձեռքբերում, աշխատանքների ընդունում, ծառայությունների ստացում	61,996	(75,096)	10,382	126,710

Հազար դրամ	Մնացորդն առ 31.12.2024թ.	2024թ.		Մնացորդն առ 01.01.2024թ.
Ստացված փոխառություններ	129,034	(22,166)	12,049	139,151
Ապրանքների իրացում, աշխատանքների կատարում, ծառայությունների մատուցում	600	(21,110)	21,110	600
Ապրանքների ձեռքբերում, աշխատանքների ընդունում, ծառայությունների ստացում	126,710	(25,052)	1,682	150,080

24. Պայմանական դեպքեր

24.1. Ապահովագրություն

Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր դեպքերի արդյունքում առաջացող վնասների հետ: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանության միջոցներ ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է նշանակալիորեն բացասական ազդեցություն թողնել Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի ու ֆինանսական արդյունքների վրա:

24.2.Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում բնորոշվում է օրենսդրական պարբերական և տարաբնույթ փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ առնվազն տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկները, հաշվետվություններն ու հայտարարագրերը և իրավունք ունեն առաջադրելու լրացուցիչ հարկային պարտավորություններ, ինչպես նաև նշանակելու տույժեր ու տուգանքներ:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե հարկային մարմինները կարողանան հիմնավորել ու պարտադրել իրենց մեկնաբանություններն ու տեսակետները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

24.3.Դատական գործեր

31 դեկտեմբերի 2025թ. դրությամբ Ընկերության դեմ առկա է թվով 1 դատական գործ՝ նյութական վնասի փոխհատուցում պահանջելու հայցապահանջով: Հաշվետու ժամանակաշրջանից հետո, մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվը, նշված գործով դատարանը կայացրել է գործն ըստ էության լուծող դատական ակտ ի վնաս Ընկերության, որով Ընկերությանը պարտավորեցրել է վճարել 44,860 հազար դրամ գումար, ինչն Ընկերության կողմից ամբողջապես կատարվել է: Հաշվետու ու նախորդ ամսաթվերի դրությամբ և մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում, Ընկերության դեմ ներկայացված որևէ այլ նշանակալի դատական հայց չի եղել:

24.4. Երաշխավորություններ

31 դեկտեմբերի 2025թ. դրությամբ Ընկերությունը կապակցված կողմերից մեկի վարկային պարտավորությունների ապահովման նպատակով ունի տրամադրած երաշխավորություններ (31 դեկտեմբերի 2024թ. դրությամբ՝ առկա չէ): Հաշվետու ամսաթվի դրությամբ երաշխավորությամբ ապահովված վարկային պարտավորությունների չմարված մնացորդի չափը կազմում է 1,395,207 հազար դրամ: Պարտապանի կողմից նշված վարկային պարտավորությունների կատարման գծով որևէ խախտման (պարտազանցման) դեպք Ընկերությանը հայտնի չէ: Ընկերության կողմից տրամադրված այլ երաշխավորություններ առկա չեն:

25. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում Ընկերությունն իր կապակցված կողմերից ներգրավել է անտոկոս փոխառություններ՝ ընթացիկ ֆինանսավորման նպատակով: Դրան զուգահեռ, նույն ժամանակամիջոցում Ընկերությունը ներգրավել է նաև բանկային վարկեր՝ ընդհանուր 552,408 հազար դրամի չափով՝ միաժամանակ հիշյալ ժամանակահատվածում մարելով ընդհանուր 974,985 հազար դրամ վարկային պարտավորություններ:

Հաշվետու ամսաթվից հետո Ընկերության շրջանառության ծավալներն իր 2 հիմնական գործունեության ուղղություններով էապես նվազել են: Ընկերության ղեկավարությունը մտադիր է արևային էներգիայի կայանների գործունեության ոլորտում անցում կատարել տեղադրման աշխատանքների կատարումից կայանների առուվաճառքի գործունեությանը՝ այդպիսով ակնկալելով եկամտաբերության ավելի բարձր շեմի ստացում: Ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ այս ուղղությամբ դեռևս ակտիվ վաճառքներ չեն գրանցվել: Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիայի

մատակարարման գործունեության մասով ևս Ընկերությունը մտադիր է վերանայել շուկայում իր մասնակցայնության դիրքավորումը՝ այդպիսով դարձյալ ակնկալելով առավել շահեկան գործարքների կնքում:

Հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթիվն ընկած ժամանակահատվածում, բացի վերոնշյալից, տեղի չեն ունեցել այնպիսի էական դեպքեր, որոնց գծով ֆինանսական հաշվետվություններում պետք է կատարվեին ճշգրտումներ կամ լրացուցիչ բացահայտումներ:

Տնօրեն

Կարեն Վարդանյան

Գլխավոր հաշվապահ՝
«ԿՈՆՍՏԱՆՏ ԿՈՆՍԱԼԹԻՆԳ ԳՐՈՒՊ» ՍՊԸ լիազոր ներկայացուցիչ
Նարեկ Թադևոսյան

31 օգոստոսի 2026թ.